Դպրոցական թափոնների հաշվեստուգում

Դասապլան
1

Ներածություն

Այս դասապլանը կենտրոնանում է սպառման նվազեցման և ապրանքների վերօգտագործման վրա: Շատ աշակերտներ ծանոթ չեն նվազեցման, վերօգտագործման և վերամշակման հայեցակարգերին: Դա պայմանավորված է աշակերտների քիչ տեղեկացվածությամբ այն մասին, թե ինչպես են ազդում շրջակա միջավայրի վրա իրենց կողմից գնված և օգտագործված իրերը: Կաթի շշերը, օգտագործված և նետված գրիչները, գնումների տեղափոխման համար պոլիէթիլենային տոպրակները, մի մասն են այն ամենի, որ նրանք հասկանան, թե ինչ է տեղի ունենում իրենց շուրջը:

Աշակերտների համար միգուցե զարմանալի լինի, որ իրավիճակն այսպիսին չի եղել իրենց ծնողների և տատիկ-պապիկների ժամանակ: Պլաստիկ ապրանքները տարիների ընթացքում դարձել են կյանքի անբաժանելի մասը:

Աշակերտները պետք է հասկանան, թե ինչու են մարդիկ անցել սպառողական կենսակերպին, որը նրանց ավելի շատ կախման մեջ է գցել «օգտագործիր և դեն նետիր» ապրանքներից:

Eco-Schools

7-8
Տարեկան

Նպատակներ

Էկո-Դպրոցներ ծրագրի քայլերը. ուսումնական պլանների փոխկապակցում, կայունության աուդիտի իրականացում, իրազեկում և ներգրավում
Ուսումնական պլանների փոխկապակցում. բնապահպանություն

Աշակերտները կկարողանան հասկանալ սպառումը նվազեցնելու կարևորությունը՝ գիտակցելու վերօգտագործման և տարբեր առարկաներից հրաժարվելու անհրաժեշտությունը:

4 QUALITY EDUCATION

11 SUSTAINABLE CITIES AND COMMUNITIES

12 RESPONSIBLE CONSUMPTION AND PRODUCTION

Պահանջվող ժամանակ/ տևողություն

- **Դասարանային աշխատանք 1.** 20 րոպե ընդհանուր գաղափարը հասկանալու և աշակերտների հետ քննարկելու համար:
- **Տնային առաջադրանք 1.** 1 ժամ տնային հարցման աշխատանքային թերթիկի համար:
- **Դասարանային աշխատանք 2.** 20 րոպե աշակերտների հետ քննարկման համար:

Անհրաժեշտ ռեսուրսներ

- Գրատախտակ
- կավիճ
- հարցման թերթիկ
- տարբեր ապրանքների ցանկ
- ռեսուրս 1. տնային հարցման թերթիկ:

Գործողություններ

Դասարանային աշխատանք 1

- Գրատախտակին գրել տանը սովորաբար օգտագործվող իրերի անունները: Յուրաքանչյուր աշակերտ պետք է նշի մեկ առարկա, և երբ բոլորը մեկական առարկա կնշեն, անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուրը կարող է ավելացնել ավելի շատ ապրանքներ,
- Աշակերտներին ներկայացնել հարցման թերթիկները և բացատրել, թե ինչպես պետք է օգտագործել դրանք:

Տնային առաջադրանք 1

- Աշակերտները պետք է լրացնեն հարցման թերթիկը իրենց տատիկի, պապիկի և ծնողների հետ քննարկելուց հետո,
- Դասարանում նրանց կազմած ցուցակը կարող է ծառայել որպես քննարկումների միջոց՝ հասկանալու՝ արդյո՞ք ապրանքները նույնն են եղել տարբեր սերունդների օգտագործման ժամանակ, թե՞ նույն նպատակի համար այլ իր է կիրառվել:

Դասարանային աշխատանք 2

- Քննարկել այն ապրանքները, որոնք նշված են հարցման թերթիկում,
- Հարցնել, թե երբ և որ սերնդի ժամանակ է սկսվել մեկանգամյա օգտագործման ապրանքի փոխարինումը վերօգտագործելի ապրանքով,
- Խմբերում քննարկել հնարավոր պատճառները, թե ինչու են մեկանգամյա օգտագործման ապրանքները փոխարինվել վերօգտագործելիներով:

Եզրակացություն

Այս առաջադրանքի ավարտին աշակերտները կհասկանան, որ պլաստիկի օգտագործումը համեմատաբար նոր երևույթ է, և նախկինում օգտագործված բնական քայքայվող կամ վերօգտագործելի շատ ապրանքներ դեռ կարող են օգտագործվել պլաստիկի փոխարեն:

Գնահատում

Քննարկել այլընտրանքային տարբերակները և ստուգել, թե աշակերտների կարծիքով որ առարկաները կարելի է կրճատել կամ հեշտությամբ վերօգտագործել:

Ռեսուրս 1

Հարցման թերթիկ

(պատասխանել այո կամ ոչ, ոչ-ի դեպքում նկարագրել այլընտրանքային տարբերակը) Քննարկել այլընտրանքային տարբերակները և ստուգել, թե աշակերտների կարծիքով, որ առարկաները կարելի է կրճատել կամ հեշտությամբ վերօգտագործել:

Ապրանք	Ձեր ծնող-ներն օգտա-գործե՞լ են այս ապրանքը իրենց մանկության տարիներին:	Ձեր տատիկ-պապիկներն օգտագործե՞լ են այս ապրանքն իրենց մանկության տարիներին:	Օգտագոր-ծում՞ եք հիմա Դուք այս ապրանք-ները:	Հնարավո՞ր է նվազեց-նել օգտա գործումը:	Հնարավո՞ր է վերօգտա-գործել:	Հնարա-վո՞ր է հրաժար-վել:
Պոլիէթիլե-նային տոպրակ						
Չիպսերի և խորտիկների փաթեթներ						
Տակդիրներ						
Պլաստիկ բաժակներ						
Զովացուցիչ ըմպելիքներ						
Ծշեր						
Ծամպունի տարա						
Օճառի փաթեթներ						
Ատամի խոզանակ						
Կպչուն սպեղանի						
Պենոպլաստ						
Խաղալիքներ						
Մեկանգամյա օգտագործ-ման ափսեներ						
Պլաստիկ ձողիկներ						
Տետռապակ						